I

Հայ-բոլշևիկների

Արարքները

II

Արդի դատը

ԱՍՊԻՐ
336

Թիֆլիս

1899

Սերիա
336

143

Ազգիր-Տարազի հրատարակութիւն № 55

Վ. ՓԷՓՈՋԵԱՆՑ

I.

ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐՈՒՄ

II

ԱՌԻՒԾԻ ՄԱՀԸ

ԹԻՖԼԻՍ
Տպ. Կ. Մարտիրոսեանցի || Тип. К. Мартиросіанца.
Арбеліановская ул., д. № 1|2.
1899

2004
891.99
Փ-31

Дозв. цензурою. 4-го марта 1899 г. Тифлисъ.

3843
41

I

ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐՈՒՄ



4398



336-2004

ԼՖ 336

I

ՀԵՑ-ԲԼՇԱՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐԻՄ

(Հատուած)

—

Բասէնի բարձրավանդակ բլուրների վրայ գարնանային եղանակ էր, չընայելով որ յունիսեան շոգեր էին սկսել դաշտի մէջ։

Դեռ հեռաւոր գագաթների և ստուերամած հովիտների յատակում սպիտակին էին տալիս ձիւնի շերտեր. բայց տեղերում, գորշ թաղուութեան մէջ՝ դալար կանաչութիւնը թաւշանման քնքշութեամբ գորգ էր կազմում՝ բծաւորուած և կտոր-կտոր եղած բազմաթիւ վճիտ վտակներով ու ջրակոյտերով։ Մանիշակագոյն ծաղիկներ — զանգակաձև լալան, շեփորաձև

կակաչն ու փոքրիկ զողտրիկ զիներբուկը— խմբերով պսակ էին կազմել առուակների շուրջը. այս-այն կողմ զարնանային դեղին ծաղիկները գլուխ էին դուրս պարզում քարոտ վայրերի և փոքրիկ խորշերի միջից. հեռուն, բաւական բարձրացած ցորենի և գարու կանաչ արտերի մէջ բարձրագլուխ՝ կապոյտ շերտեր էին դնում խիարուկները. իսկ կապոյտ շուշանը ճախնուտ կողմերում բացւել, իր մեծ նուրբ շուրթերն էր ցնցում մեղմիկ զեփիւռի տակ։

Ալեձև կանաչ բլրակներ հետզհետէ բարձր, գոյնզգոյն ծաղիկներով, փողփողուն վտակներով շերտաւորւած սարահարթեր՝ միմեանցից զեղաձիծաղ, միմեանցից կենսապարար՝ շրջապատում էին այն մեծաւոր անկիւնը, ուր գարնան սկզբից ի վեր բանակել իջել էր բոշաների մի ցեղ՝ գորշ վրանների տակ, մեղմիկ ցած հոսող

ջրվէժի կողքին, փոքրիկ, բայց շքեղ մի հարթութեան վրայ։

Գիւղերը՞ հեռու չէին. մի քանի բլուրներ՝ և ահա տարածւում՞ էր Հասան-Ղալայի դաշտը՝ կտրւած մեծ, զղտոր Երասխով։ Ամեն կողմ բնակութիւններ. հեռւում՝ հնացած, խարխուլ քաղաքն ու իր ապառաժուտ կողքերով բերդը. դէպի ձախ՝ ոլորապտոյտ Դէլէ-բոյնուի կիրճը, դէպի աջ՝ Բասէնի շքեղ դաշտը. ապա, հորիզոնի մշուշի մէջ՝ լեռներ ու լեռներ, բարձրը, դաժան շղթաներ...

—

Բոշաների բանակած տեղը թէ գեղեցիկ էր և թէ ապահով. մի՞ քանի քայլից յետոյ մի արահետ, քսան բոպէի վազքով կրհասցնէր Հերթև. ձիով երկու ժամ՝ դէպի բերդաքաղաք։ Բոշա կինը կարող էր առաւօտ շուտով ելնել, մտնել դաշտը,

հինգ-վեց գիւղ թափառել և երեկոյեան վերջալոյսին՝ վրանները վերադառնալ։

Ցերեկները վրանների առաջ քիչ բազմութիւն կար և քիչ էր կենդանութիւնը։ Ահագին զամբռները քնում էին արևի տակ. էշեր, եթէ դաշտ չէին իջել, արածում էին բոշա մանուկների հսկողութեան ներքոյ. մանուկները խոտերի մէջ, մէջքի վրայ տարածուած, երազում էին բաց երկնքի առաջ, կամ քնում. իսկ տղամարդիկ, վրանների հովանու ներքև՝ մաղ էին գործում կամ փսիաթ։ Մի քանի կանայք, ղեռ ջահել հարսները, վրանի առաջ օջախ կազմած, փշերից ու գիւղերից բերուած փայտերից կրակ կազմել՝ կերակուր էին եփում, լացք անում, կամ թէ խումբ առ խումբ քիչ հեռու, ծաղիկների և ջրվէժի կողքին, գուլպայ էին գործում և խօսակցում։

Գիշերն էր, որ սկսում էր մի եռուն, զարթ կեանք այդ վրանների մէջ։

Վերջալոյսին ամենքը տուն մտած, տեղաւորում էին իրանց բերածը, ապա ճաշում. յետոյ, աթառակալի—իրանց ցեղապետի վրանի առաջ մի մեծ խարոյկ վառում և երբ մութը իջնում էր բլուրների վրայ, երբ լուսինը կաթնագոյն լոյսով ողողում էր այդ սքանչելի բարձրութիւնը --պլպլացող խարոյկի շուրջն էին կիտուում բոշաները. գալիս էր հովական տիկը, և, օրուայ անցքերի մասին խօսելուց յետոյ, գիշերային լռութեան մէջ, շների ընդհատ ոռնոցների, մանուկների զարթ կանչերի միջից, սկսում էր երաժշտութիւնը. բոշայական տխուր, մելամաղձոտ նուագը, որ արձագանք տալով՝ թրթռում էր, իջնում ծործորների խորքերը կամ երերուն ու մեղմիկ՝ գնում մեռնելու դէպի բարձրութիւնները։

Նուագում էր տիկը միաձայն, մի տխուր խազի երկար տևողութեան միջից

մեղմաձայն արտայայտելով երգի տխուր
ել և էջները, որոնք ելնում էին ոլորուն
ու ճնշող, ապա հանդարտ ու գեղգեղ՝ իջ-
նում հալւում էին միաձայն խազի գրկում։

Եւ տխուր խազը մի վայրկեան նրան
հանդարտ օրօրելուց յետոյ, նորից բաժա-
նում էր երգին և նորից նետում դէպի
տարածութիւնը։

Այդպէս ժամանակ շներն խիստ դա-
դարում էին հաջելուց. խարոյկի սրփ-
ռած լոյսի հեռաւոր աղօտութեան մէջ,
գլուխը թաթերի վրայ առած, անշարժ,
ուշադիր, աչքերը երաժշտին, դէմքերը
կծկելով՝ լսում էին։ Մանուկները ծնկները
բարձր, գլուխը ծնկների վրայ, կուչ եկած
կամ թաւալած խոտի մէջ և ակնարկը
հորիզոնին, աշխատում էին ոչ մի խազ
չբկորցնել մելամաղձոտ երաժշտութիւնից։

Ամեն բոշա սիրում է երաժշտութիւ-
նը. այնքան է սիրում, որքան իր ազա-

տութիւնը, որքան իր բաց երկինքը։ Ամեն
բոշա մանուկ բանաստեղծ է, սիրահար
երգի, սիրահար՝ լուսընկայ պայծառ երկնքի,
պսպղուն կապոյտ երկնակամարի, դալար
ու ջրաշատ բարձրութիւնների և մելա-
մաղձոտ, երազել տուող երաժշտութեան։

—

Եւ ահա նստել են բոշա տղամար-
դիկ չիբուխները ձեռքերին՝ վառուող խա-
րոյկի լոյսի մէջ ու գլուխը կախ՝ լսում.
բոշա կանայք անդադար գուլպայ գործե-
լով կամ բուրդ մանելով՝ խումբ առ խումբ
տեղ են բռնել քիչ հեռու. և նուազողի
դէմքն է միայն, որ ուռած թշերով
և մեծ տիկը բերնին դէմ տուած, ոգևոր-
ուած ու կարմրատակած, աչքերը դէպի
բարձր՝ լուսաւորւում է կատարելապէս։

Յետոյ յանկարծ, միաձայն խազի մի
բոպէ տևողականութիւնից յետոյ, նուազո-
ղը շարժւում է և սկսում մի պարերգ. մի

կաքաւոզ, թռչկոտուն, զարթ պարերդ, որ շարժումն է ձգում մանուկների մէջ, շարժում է մինչև իսկ շներին։

Կանայք միմեանց երեսի են նայում, տղամարդիկ կանանց՝ աչքով պարի հրաւիրում, մանուկները սողալով աւելի մօտ գալիս, յետոյ, մէկէն, մի երիտասարդ ցատկում է մէջ տեղ, ձեռքերը տարածում, մարմինը կոտրտում, նազանքներով սահում գետնի վրայից և իր վրայ պտոյտ գործելով՝ շրջաններ է գծում խարոյկի բոլորքը։ Ու բոշաները սկսում են մեղմիկ ծափահարել. մի քանիսը բթամատով և երրորդ մատով շրրփացնում են, ուրիշները խուլ ձայնով շշշացնում. ցեղապետը սիրալիր ժպտում է և գոչում.

—Դէհ, աղջիկներ, ձեզ տեսնեմ...

Բայց կանայք դեռ չեն շարժւում. դեռ նազ են անում, միմեանց առաջ մըղում, միմեանց հրաւիրում։

Ապա մի հարս, մի համարձակ կին, ոստիւնով ելնում է և առաջ նետւում։ Երիտասարդը ետ է քաշւում ու նստում. այժմ կինն է պարողը. միասին չեն պարում։

Սրանում է կինը ձեռքերը շրրփացնելով, մէջքն ու իրանը կոտրտելով. երբեմն այնպէս կռանում է և շնորհալի դէպի գետին հասնում, որ կարծես մտադիր է պառկել. այդպէս կռացած ու մէկ կողքի թեքւած՝ նա առաջ է գնում և յանկարծ զսպանակի պէս վեր նետւում ու նորից մէկ այս մէկ այն կողմ ծռւելով, ձեռքերն օրօրելով, կռները պտտցնելով, գլուխը այս-այն կողմ, ժպիտը դէմքին՝ սահում է. կարծես ոտքը գետնին չէ դիպչում։

Նրան, քիչ յետոյ, դէմ առ դէմ է գալիս մի ուրիշ կին և ահա սկսում է խաչի պարը։ Երկու հանդիպակացները

միևնոյն շարժումներով դիմաւորում են իրար ու խաչեր կազմում. կանոնաւոր խաչեր, կենդրոնը խարոյկը. ոչ մէկի շարժումը միւսից չի զանազանւում. ծռւում են միասին, նոյն նազանքներն անում, նոյն ամանակով մատները շրրփացնում և նոյն բոպէին խաչաձև գծերի ծայրերը հասած՝ միաժամանակ դառնում, դէպի կենդրոնը սրանում և կենդրոնից դէպի խաչի թևերը սահում...

Այդ բոլորը կատարւում է այնքան արագ, այնքան ճշտութեամբ, որ սքանչելի մի տեսարան է պատկերանում միաժամանակ դէպի կենդրոնն եկող և ապա լայնութեան թևի ճիւղերն գնացող զոյգից:

—

Տասնևհինգ բոպէ, տասնևհինգ խաչ ձևացնելուց յետոյ, երկու կանայք երկարութեան թևի ծայրերից դէպի կենդրոնն

են գալիս, միմեանց գլուխ տալիս և պարը այդպիսով վերջանում է:

Այնուհետև երաժշտութիւնը պահ մի լռում է: Սկսում է մի խօսակցութիւն: Ամեն ոք պատմում է իր տեսածն ու լսածը, դաշտից, գիւղերից բերած նորութիւնները: Սկսում են սուր խօսքեր, կատակներ, փոքրիկ պատմութիւններ... Մանուկները ժողոված հեռուն՝ խաղում են. աթոռակալը խրատներ է կարդում: Բոլորը պատկառանքով լսում են ալևորին, այդ փորձած նահապետին, որ գիտէ բոլորի ցաւերը, բոլորի ուրախութիւնները:

Յետոյ նւագողը դարձեալ տիկը ձեռք է առնում, ուռեցնում և ահա կանանց ու տղամարդկանց խումբը միասին, ըսկսում է երգել նախ մեղմ, ապա ուժգին՝ և սարահարթը լցւում է մի անուշ երաժշտութեամբ: Մանուկները քիչ-քիչ ընկերանում են, խարոյկը բոցեր արձակում,

ճարճատում, շողում ու կարմիր գոյն սրփ-
ռում խմբի վրայ...

Ահա այսպէս էին կեանք վարում Բօշ
վրանների մէջ բնակւող և թափառական
այն հայ բոշաները, որոնց մէջ էր եկել
քիչ հանգչելու Մարգօն, առնելով իր աղ-
ջիկը Էրզրումից։

Բօշ վրանների բնակիչները Փոքր-
Ասիայից, Բոյբաթի կողմերից ելած, թա-
փառելով մտել էին Էրզրումի նահանգը
և երկու տարուց ի վեր, գարնանից ըս-
կսած՝ վրանաբնակ, ձմեռը գիւղերում,
կտրել էին ամբողջ երկիրը և այժմ Բա-
սենի դաշտումն էին մտադիր անցկացնել
այդ ամառը։

Մարգօին բոլորը ճանաչում են և
ամենքը յարգում։ Մարգօն իր օջախը, իր
վրանը չունի. նա հիւր է ազգակիցներից
մէկի մօտ. բայց ինքն իր աշխատանքով
է ապրում։ Ո՛չ մի բոշա կին նրա պէս

336-2004
(38413) 861

ճարպիկ, շատ հաւաքող և մեծ պա-
շար բերող չէ ամբողջ վրաններում.
ոչ ոք նրա պէս երկիրներ տեսած,
ամեն անկիւն, ամեն ճանապարհ ճանա-
չող չկայ և ոչ ոք սակայն՝ նրա պէս
մռայլ ու տխուր, լռիկ ու մտախոհ չէ
ամբողջ ցեղի մէջ։

Բոլորը գիտեն Մարգօի պատմու-
թիւնը...

—

Այնտեղ, դէպի Բոյբաթ տանող ճա-
նապարհի վրայ, դրանից շատ տարիներ
առաջ, երբ Մարգօն դեռ իր ցեղի ամե-
նասիրուն հարսն էր, Կ. Պոլսից եկած մի
անցորդ թիւրք աստիճանաւոր տեսել էր
նրան և զէնքի ոյժով խլելով՝ բռնաբա-
րել, թողել էր ու անցել։ Մարգօին հի-
ւանդ՝ Բոյբաթ էին իջեցրել. նա մտքումը
դրել էր անպատուողից վրէժ առնել։ Թո-
ղել էր տուն ու տեղ, ամուսին, որդի, գը-

ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.
Ակադեմիայի
Գրադարան

նացել էր Կ. Պոլիս, աստիճանաւորին որոնելու և չէր գտել։ Եկել էր Երզնկայ, նոյնպէս չէր գտել. յետոյ վերադարձել էր իր երկիրը և ինչ տեսել։ Իր ամուսինը, իր Արթէնը ոչ միայն թողել էր բոշայութիւնը, այլ և թիւրքերի հետ միացած՝ ամեն տեսակ չարիքներ էր տեղում ազգակիցների գլխին, մատնում էր, դաւաճանում, բոշա հարսների թիւրք պաշտօնեաներին տանում և որը առաւելն է, դաւադրութեամբ ամբաստանել էր ծերունի աթոռակալ Մովսէսին, ինքը թիւրքացել, բռնի բոշաների ցեղապետ էր կոչուել ու մի թիւրք կին տուն բերելով օջախը պղծել...

Մարգօն այդ բոլորին չէր դիմացել. աշխատել էր ամուսնուն համոզել, տանել իր հետ, հեռացնել այդ ստորութիւններից։ Բայց Արթէնը վռնդել էր նրան, կոպտաբար մերժել։

Եւ այն ժամանակ Մարգօն կատաղի, դաշոյնահարել էր ամուսնուն, գլորել նը-րան թոնիրի մէջ և նրա արիւնով սրբել իր օջախի անպատուութիւնը...

Բայց դեռ իր հոր օջախը պղծած էր մնում. դեռ իրան բռնաբարողից վրէժ չէր լուծած. մինչև այժմ Մարգօն, լի վրէժխնդրութեան ծարաւով՝ վնտռում է վատին, որոնում նրան երկրի ամեն անկիւններում և քանի չէ գտնում, այնքան տխրում է, մռայլւում. մոռացել է նա ամեն ինչ. միտքը միայն և միմիայն իր վրէժին է յարած...

—

Եւ լուռ ու խոհուն՝ նստել է Մարգօն ահա կանանց խմբի մէջ գլուխը ծընկան, ձեռքը գլխին յենած, աչքերը կրակին՝ անցել է իր հին յիշողութիւններին։ Յիշում է որ ինքն էլ մի ժամանակ պարում էր զարթութեամբ խաչի այդ պարը

և ոչ ոք չէր կարող նրա հետ մրցել։ Յիշում է, որ տղամարդկանց խելքը գնում էր, երբ նա կարմրած ու բոցափայլ աչքերով, իր վայելուչ երկար ու ճկուն հասակը ոլորտելով, սեթևեթ շարժումներով սահում էր դետնի վրայ, նազանքներով աչքերը ոլորում, դիլթիչ ժպիտով շուրջը կախարդում և ապա, հպարտ այդ բոլորով, գնում էր նստելու կանանց մէջ՝ տրդամարդկանց աչքը միշտ իր վրայ։ Յիշում է, թէ ինչպէս բոլորը նախանձում էին իր ամուսնուն, որ այդպէս քաջ, դեղեցիկ և համեստ կին ունէր...

Իսկ այժմ. ի՞նչ է նա։ Գեղեցկութիւնից միայն աչքերն են մնացել, որ այլևս չեն բոցավառւում, այլ լի են մըռայլ ու տխրութիւն՝ սփռող խոհերով. հասակը նոյնն է, բայց այլ ևս ոչ գողտրիկ, ոչ ճկուն և դէմքի վրայ, կիզացած այրուած կաշին խորշոմել է, կնճիռներ կազմել. այտերը փոս են ընկել, շրթունքները դառն արտայայտութիւն ստացել և սիրտը, որ մի ժամանակ այնքան զարթուութիւն, այնքան հրապոյր էր սփռում, այժմ ճնշած է, դառնութեամբ լի և վիրալից...

Եւ երբ սկսում են երգել, Մարգօն յիշում է որ ինքն էլ երգում էր այդ, մասնակցում նրան, որ ինքն էլ իր քաղցրը ձայնով հրապուրում էր բոլորին և վաղուց, վաղուց էր որ մի խաղ չէր հանել կոկորդից. մոռացել էր իսկ երգի խօսքերը...

Ու դառնացած սկսում է լսել։

Խմբական երգը կանգ է առնում։ Այժմ, մի տղամարդ, ձայնը բարձրացնում է և սկսում մի հնամեայ երգ.

Թէև մութն իջաւ
Երկինքը պատեց,

Թէև սառ ելաւ
Երկիրը պաղեց,
Բայց մթան միջից
Լոմ աղջիկն ելաւ
Ու սառի միջից
Ջերմութիւն սփռեց։
Լոմ աղջիկ սիրուն,
Աչերդ լոյս տուեց.
Լոմ աղջիկ սիրուն,
Սիրտդ ջերմ սփռեց...

Դրան իբր պատասխան, լոմ (բոշա) կանանցից մէկը գլուխն է բարձրացնում ու երգում.

Թէև մութն ընկաւ
Երկինքը պատեց,
Թէև սառ ելաւ
Երկիրը պաղեց,
Բայց մթան միջից

Ես քեզ լոյս կըտամ,
Եթէ դու լինիս
Իմ տանը Հսկան։
Եւ սառի միջից
Ես քեզ սիրտ կըտամ,
Եթէ դու լինիս
Առիւծի նման։
Լոմ տղայ կտրիճ,
Աչերս քեզ կըտամ,
Լոմ տղայ կտրիճ,
Սիրտս քեզ կըտամ...

Այս ընդդիմախօսական երգը շարունակւում է և ամեն անգամ երգում են տարբեր կանայք։ Եղանակը զողտրիկ ու կայտառ, բայց միատեսակ է և նմանում է վիճաբանութեան։ Մանուկները թողնում են ամեն բան և մօտենում. աթոռակալը ժպիտը երեսին՝ գլխում է վէճը. տղամարդիկ տաքանալով՝ միմեանց են քաջալերում

և կանայք միմեանց յորդորում՝ աւելի սուր պատասխաններ շարադրելու։ Եւ Հովւական տիկը իր միաձայն խազովը ձայն է բռնում երգելիս, իսկ միջավայրերում մի թեթև նախերգանք հնչեցնում։ Ըստ երևոյթին երգը մի հին, վաղաձանօթ երգ էր. բայց վարպետութիւնը նրանումն էր կայանում, որ երգողը պարտաւոր էր նոյն յանգերով և նոյն եղանակով ինքնուրոյն, նոր բան արտադրել։ Որքան սրամիտ էին առաջարկները կամ պատասխանները, այնքան գովասանք և հրճւանք էին ստանում։

Ահա շարժւում է մէկը, ձայնը բարձրացնում և յանպատրաստից՝ բանաստեղծում։

Թէև մութն ընկաւ
Երկինքը պատեց,
Թէև սառն եկաւ

Երկիրը պաղեց,
Բայց խիստ խաւարում
Համբոյրը լոմ աղջկայ
Զրթունքիս դիպած՝
Խոշոր լոյս կրտայ.
Եւ սառած երկիրը
Լոմ աղջկայ սիրով
Զոգի կրդառնայ։
Լոմ աղջիկ սիրուն,
Համբոյրդ յոյս կրտայ.
Լոմ աղջիկ սիրուն,
Սէրդ կեանք կրտայ...

— Էհ՛է, էհ՛է, վատ չէր. ասում է աթոռակալը — ապա տեսնենք, կանանց կողմից ինչ պատասխան կրդայ։

Եւ մինչ տիկը նախերգանքն է անում, կանայք իրարու մէջ փսփսում են, յետոյ մէկը ժողովում է իրան և պատասխանում.

Է՛յ մթան միջից,
Կանչող լոմ լախուզ *)
Է՛յ սառի միջից,
Աղաչող մանուս. *)
Լոմ աղջիկն երբէ՞ք
Քեզ համբոյր չի տայ,
Լոմ աղջկայ սիրտը
Քեզի չի դառնայ,
Եթէ քո ձեռքը
Երկաթ չըփշրի,
Եթէ քո սրտից
Աշխարհ չըհալուի։
Լոմ տղայ քնած,
Լոմ աղջիկն երբէ՞ք
Ոչխար չի դառնայ,
Որ գայ ու քեզ հետ՝
Միշտ խոտ արածայ...
—Բա՛, բա՛, բա՛... կանչում է աթո-

*) Բոշա տղամարդ.
**) Մարդ.

ռակալը – կերա՞ր, Գիյո՛ր, այս էլ քեզ պատասխան. մարսեցի՞ր...

Ու բոշաները բոլորն էլ զարթ ծիծաղ են արձակում։ Բայց Հովւական տիկը շարունակում է. կանայք սկսում են տղամարդկանց ծաղրելով՝ զրդռել. սրանք էլ ամաչած՝ զրդում են իրանց միջի երիտասարդներին՝ ամօթով չըմնալ։

—Տօ, ինչ էք ձէններդ կտրել, մարդի՛կ, կանչում է մի ծերունի—ո՞ւր է լեզուներդ. վա՛յ ես ձեզ ինչ ասեմ...

—Կնգայ խօսքի տակը մնա՞լ... ծօ, չըխօսէ՞ք.

Վերջապէս մէկը հազում է ու երգում.

Ես մթան միջից
Կանչող լոմ լախուզ,
Ես սառի միջից
Աղաչող մանուս,

Ձեռքս երկաթ փշրի,
Քեզ կոշիկ շինի,
Սիրտս աշխարհ դիւթի,
Ոտքիդ տակ բերի.
Լոմ աղջիկ սիրուն,
Սոա՛, ինչ կուզես,
Որ ինձ համբոյրիդ
Արժանի տեսնես...

Կանայք իրար են անցնում. այժմ ամենքն են ուզում պատասխանել. ամենքը բորբոքւել են:

Բայց յանկարծ Մարգօն, որ լուռ լսում էր, շարժւում է, բուռն շարժմամբ դէն է հրում կանանց և ի զարմանս բոլորի, խռպոտ ու խուլ ձայնով երգում.

Է՛յ դու մթան մէջ,
Կուչ եկած լախուզ,
Սառուցների մէջ
Զորացած մանուս.
Ելիր, մէյդա՛ն եկ.
Աղջիկս քեզ կըտամ,
Աշխարհում մուրամ՝
Բերեմ քեզ պահեմ,
Եթէ դաշոյն ձեռքիդ
Օջախս սրբես,
Եթէ թշնամուս
Ոտիս տակ բերես...

Ասում է ու հրաբորբոք աչքերով ոտքի ելնում:

Բոլորը ապշել են. տիկը լռում է և մի բոպէի խոր, անշշուկ լռութեան մէջ լսւում է նորից Մարգօի խրոխտ, զողդոջուն ձայնը, որ այս անգամ առանց երգելու գոչում է.

—Տեսնենք, ո՞վ է այն լոմ կտրիճը, որ աղջկանս և օջաղիս համար ցուպը

ձեռք առնի, գայ ետևիցս և իր կեանքը զոհի!...

—

...Ու ճարճատում է խարույկը, լուռ են բոշաները. և բնութեան անորոշ, տխուր, գիշերային շշուկն է որ սահելով լեռների կողերից՝ գալիս խառնւում է ջրվէժի մեղմիկ շառաչիւնին. լուսընկայ տարածութիւնը մշուշի քողով աղօտացել է շրջակայքում, խարույկի արնեղոյն կիսալոյսի մէջ տեսնւում են արևակէզ, ակօսած, կնճռալից, տխուր դէմքեր...

II

ԱՌԻԻԾԻ ՄԱՀԸ

ԱՌԻԾԻ ՄԱՀԸ

(Զրույց)

—

Անապատի մէջ արշաւող, անտառը թունդ հանող և ազատութեան մէջ մեծցած խրոխտ առիւծը թակարդի մէջ ընկաւ։

Անտառից ելած՝ որս էր որոնում, շուրջը ահ սփռելուն համար՝ մտովին հրճւում, երբ յանկարծ գլուխեց ընկաւ և մի ցանցի մէջ իրան բռնուած գտաւ։ Մի ցանց ահռելի, յամրաբար շարժուող, կըծկուող-գալարուն, որ մի բոպէի մէջ կաշկանդեց նրան, քաշեց-հաւաքեց ու կծիկ դարձրեց։ Ոչ մի շարժում իսկ գործել չէր կարող. մի խումբ կոշտ կապեր, սարդի

ճանկերով՝ պարզուեցին նրան և առիւծը ընկած էր խճճած, կապուած...

Առիւծը մռնչաց, կատաղեց, բուռն ճիգեր գործեց, ոստոստեց, կապերը կրծոտեց, որչափ ոյժ ունէր՝ գալարուեց, տանջուեց, բայց ոչ շղթան փշրեց, ոչ էլ ցանցը պատռեց...

—

Անտառի քաջը, կենդանիների արքան գերի էր այլևս: Իր կեանքում երբէք կապեր չէր տեսել, արգելքի առաջ գլուխ չէր ծռել. կտրել էր դաշտ, ձոր, անապատ անհուն. անցել էր անտառ, գետեր սրընթաց. տրորել փշրել, մագլցել լեռներ... աշխարհն ամբողջ ոտնատակ տուել, ազատ օդի մէջ ապրել անկաշկանդ, ազատ էր սնուել, ազատ էլ ծնուել և ահա այժմ կծկած, գալարած, ցանցով խճճած, գետնին պինդ գամած, անհասկանալի

կապերով սեղմած, չէր էլ ըմբռնում թէ ինչ էր եղել, ինչու բանտարկուել և կամ ով էր նրան այդպէս խղճուկ, դառն դրրութեան մէջ ձգել:

Մռնչաց, ոստնեց, ժամերով ճգնեց. ապա՝ յուսահատ, աչքերը փակած, գլուխը կրծքին, բաշը իջեցրած՝ սկսեց խորհել:

Ի՞նչ էր այդ ոյժը — իր ոյժից շատ բարձր, այդքան խորամանկ և այդքան ճարպիկ. ումն էր ահռելի այդ շանթող ձեռքը, որ աներևոյթ՝ պարզած դէպի նա, անտառի հերոսից կծիկ էր շինել ու անշարժ, գերի՝ դաշտի մէջ դամել:

Եւ նա վեր նայեց: Մի թեթև ու թոյլ խշրտուք լսեց, ապա, իր ցանցից մի քայլ հեռուում մի մարդ նշմարեց: Մարդն էր այն — չնչին արարածը, որից տասնեակներ նա պատառոտել բզկտել էր յաճախ և որն այժմ այնտեղ, ցանցի կապը

ձեռին, նայում էր իրոխտ որսին, նայում հրճւանօք, ծաղրում արքային, ծաղրում հսկային...

Ելաւ, ուզեց ոստնել, յանդուգն ծաղրողին մի պատառ շինել, վշրել, տրորել... Բայց մարդը կապը ձգտեց և ցանցը կուչ եկաւ, աւելի սեղմւեց ու առիւծի ջանքերն ի դերև հանեց...

Օ՜հ, ի՜նչ անկում, ինչպիսի՜ վիճակ։ Խաղալի՜ք լինել մարդի ձեռքի մէջ։ ենթարկւել ծաղրի, հեռու անտառից, խըլւած անապատից, ազատ վայրերից, ստորացուցիչ կապերի մատնւած, անյոյս ու դերի!...

Եւ առիւծը դառնացած՝ լացաւ ազիողորմ։ Ու նրա լացից անտառը դողաց, ժայռերը հնչեցին, դաշտը թունդ ելաւ...

—

Օրերով մնաց առիւծը ցանցի մէջ. նրան կեր տւին. բայց ոչինչ բերանը չ'առաւ. նրան շրջապատեցին. բայց նա լուռ մնաց, լուռ և յուսահատ, մահւան ցանկացող...

Մի օր էլ մի մեծ վանդակ բերին պաւաճան ցանցի կողքին, յետոյ առիւծին ստիպեցին ելնել. ցանցը լայնացրին, շինկացած երկաթներով հզօրին առաջ մղեցին և նկուն դարձրած՝ վանդակի մէջ առին։

Այժմ կապ չըկար, բայց երկաթէ ամուր ձողերով կազմած չորս բարձր պատեր։

Առիւծը փորձեց բացւածքների միջով նեղնալ՝ դուրս սահել. գլուխը դէմ տւաւ, հսկայ ոստիւններով ձողն ի վեր թռաւ, կատաղի քայլերով վանդակի մէջ վազվզեց, հնարք որոնեց, դրսում երևցող ազատ երկնքին կանչեց, ազատ տարածութիւնը տենչաց, ապա ամբողջ վանդակը ցնցեց, դղրդացրեց... Բայց տեսաւ

որ զուր էր, ամեն ջանք ունայն և որ գերի էր, բռնված, կաշկանդված...

Տխուր ու տրտում նստեց վանդակի ճողերի առաջ, ոտները ծալեց, պոչը հաւաքեց, գլուխը թաթերի վրայ առաւ և աչքերն անյաղ տենչանքով լիքը, սևեռեց հեռու՝ իր անապատին, իր զոռ անտառին, ուր երէկ դեռ. ևս հպարտ ու խրոխտ՝ անցնում էր ազատ, ուր երէկ դեռ ևս իր լայն թռքերով շնչում էր, փռնչում...

Ահա այն ժայռը, այն մեծ լերկ քարը, որի կատարին կանգնել էր ժամերով, արևի տակ հանգչել, հեռուները դիտել, իր սուր աչքերով որսեր որոնել և արհամարհոտ՝ ոտքերի մօտից սահող մողէսները զննել, գեռունների փոքրութիւնը ծաղրել...

Ա՜հ, որքա՜ն կուզենար այժմ այդ մողէսների պէս փոքր լինել, սահել վանդակի ճողերի միջով, գնալ ապրել միշտ խուլ խոռոչներում, աւազների մէջ, չնչին բան դառնալ, առիւծ չլինել, միայն թէ ազատ. ազա՜տ կապերից, վանդակից. բնութեան ծոցում ուզած տեղն ապրել, ուզած տեղը մեռնել...

—

Վերջապէս մի օր վանդակը շարժեցին, օրերով՝ գլորած տարին, յետոյ ինչ որ երերուն տախտակի վրայ ամրացրին և մեծ ջրի վրայ լողացնելով՝ տարան բազմամարդ երկիր հանեցին:

Առիւծը այդ բոլորը տեսաւ զարմացած: Ծովի ալիքների, կապոյտ տարածութեան առաջ զմայլած մնաց — իր անապատը կարծեց. յետոյ վանդակի շուրջը ժողովուող ժխորին նայեց քամահրանօք. իմացաւ որ մտցրել էին իրան մի անծանօթ տեղ, ուր ո՛չ անտառ կար և ո՛չ ա-

նապատ. ուր Հորիզոնն իսկ վանդակի էր նմանում — փակուած, կարճ, սեղմուած, և օդը ճնշող, թանձր, հեղձուցիչ:

Ձշմած, մեքենայաբար կերաւ ինչ տուին, արեց՝ ինչ ուզեցին: Էլ չբմռնչաց, էլ չբկատաղեց, միայն կծկուած վանդակի մի անկիւնում՝ անշարժ ժամերով, միտքն իր անապատին, երաղը՝ անտառին, լայնարձակ օդին՝ դառն հեկեկանքով լացաւ ու մեռնել ուզեց...

Այդպէս նրան տարան, շրջեցրին քաղաքներ, նորից ջրեր անցկացրին, նորից մռայլ, խեղդիչ երկիրներ և վերջ ի վերջոյ մի անտառանման այգու մէջ մտցրին. վանդակը բարձրացրին, ստիպեցին նրան անցնել մի ուրիշ աւելի մեծ ու կլոր շրջանակի մէջ, դուռը փակեցին, մի կտոր միս էլ ներս ձգեցին և թողեցին հեռացան...

Առիւծն այժմ դաղանանոցումն էր:

—

Ի ցոյց էր դրուած մի մեծ ու կլոր քարձր վանդակում, ուր մինչև իսկ, կարծես նրան ծաղրելու համար, փոքրիկ քարերից՝ չնչին, խաղալիքի նմանող մի ժայռ էին կազմել, մօտն էլ սիւնի պէս կերտուած, ցանցառ տերևներով, մանրիկ ճիւղերով ճղճիմ ծառ տնկել, ծառի տակը՝ ջրի աւազան, վանդակի յատակի վրայ՝ ծովի չոր աւազ...:

Առիւծը շուրջը նայեց, զգւանքով տեսաւ իր ազատ հայրենիքը ծաղրող ծառն ու ժայռը, պոչով փշրեց առաջինը, ոտքով կոտրտեց երկրորդը և դուրս նայեց: Դիմացը՝ պատեր, հեռուն՝ ուրիշ վանդակներ էլ. ապա՝ մռայլ ծառեր և նրանց տակը պոտող գծուծ նայողներ, որոնք երբեմն մօտ էին գալիս, բերանը բաց՝ դիտում և կամ ահաբեկ՝ ետ ետ էին քաշւում...

Եւ յանկարծ այդ բոլորի մէջ լսեց

մի ծանօթ ու խռպոտ մռնչիւն, որ լուտանքով գոչում էր.

—Ողջոյն անկեալ վեհափառութեան!...

Դարձաւ։ Իրանից տասը քայլ հեռու, նոյնպէս վանդակում, ձողերի միջից գլուխն երերցնելով, չարամիտ վագրը աչքերն հեգնութեամբ լի՝ իրան էր նայում և երբ նրանց ակնարկները միմեանց հանդիպեցին, արիւնարբու գազանը օռնաց ու ասաց.

—Ողջոյն, անապատի հզօր դու արքայ, զոռ անտառների, ազատ ժայռերի մեծդ դու հսկայ, եկել ես մեզ ընկեր—մեզ՝ չնչիններիս, մեզ ստորներիս բախտակից եղել... Ողջոյն, ողջոյն ուրեմն, անկեալդ վեհափառութիւն!...

Ապա մի մեծ քրքիջ, չարախնդաց, դիւային ծիծաղ լսեց նրա վանդակից, յետոյ քրքիջն անցաւ մի երրորդ վանդակ,

որտեղից ինձը ատամները բացած, փայլուն աչքերով՝ նայում էր հեգնութեամբ... Եւ այդպէս, մէկէն, քրքիջը քայլեց, վանդակից վանդակ մտաւ և մի րոպէի մէջ առիւծն իրան գտաւ շրջապատուած՝ չնչին անասունների, գերի գազանների, գայլի և նոյն իսկ կապիկների՝ ծաղրով ու հեգնութիւններով։

—Ա՛հ, արքայ, խոնարհ մեր ողջոյն, կանչում էր ինձը։

—Ողորմած եղիր, հզօր թագաւոր, որ համարձակւում ենք քեզ ընկեր լինել. օռնում էր գայլը։

—Մենք կապիկներս քեզնից հզօր ենք, ճչում էին անճոռնիները—որովհետև ուրախ ենք և կատակում ենք...

Ու ծաղր, հեգնութիւն, քրքիջ, աղաղակ ամեն կողմից երկար՝ տեղացին բրոնուած հզօրի անպաշտպան գլխին...

Առիւծը մռնչաց, ոստնեց դէպի ձո-

ղերը, ուզեց դուրս ելնել, տրորել — ջարդել այդ հեգնողներին... բայց բաղխուեց ձողերի, դազանապահի հրաշէկ երկաթը այրեց նրա թաթը և նա նկուն, կատաղի՝ գլուխը թաթերի մէջ առաւ և ուզեց մեռնել...

—

Դառն էր այդ բոլորը, դառն, անտանելի: Մեռնելը խիստ լաւ էր: Կուզենար տեսնել իր արեան կաթիլ առ կաթիլ քամուելը, իր անդամների կտոր առ կտոր բզկտուելը, կուզենար թաթերը փշրել ձողերի վրայ, սիրտը յօշոտել, կորզել դուրս ձգել. .

Գիշերն էլ եկաւ մռայլ ու խոնաւ: Ծաղրն ու քրքիջը սաստկացաւ, մեծացաւ.

— Ա՛հ, մեռնելուց վախենում ես, զոչում էր վագրը — վանդակի մէջ ես, փառաւոր արքայ...

— Ա՛հ, դու թշուառ ես, առիւծ ահալեց, մլաւում էր ինձը...

— Թքէ՛լ, թքել առիւծի վրայ. ճչում էին կապիկները...

Առիւծը գլուխը կռացրեց, քաշուեց քարերի ետևը, աշխատեց մթութեան մէջ ընկղմել, ծածկուել և այդ ծաղրող ձայները չլսել:

Ո՛չ, պէտք էր դուրս գնալ. ինչ որ էլ լինէր, մեռնէր կամ ապրէր — պէտք էր դուրս ելնել, ոտքի տակ տալ, տրորել ամեն բան, ամեն արարած, միայն մի րոպէ, մի վայրկեան ազատութեան մէջ լինել, այնտեղ էլ մեռնել...

Եւ նա մօտեցաւ վանդակի դռան, խուլ մռնչիւններով քաշեց ձողերը, ցնցեց ամեն բան ու գերբնական մի ոյժով, յուսահատ ճիգով փշրեց դռան շղթան ու դուրս թռաւ իր դիմացը բռնուած հրաշէկ երկաթի վրայ...

Գազանապահն էր այն, մի սպառնալից, կրակած ձողակով՝ որ մօտենում էր նրան և հնչեղ ձայնով ներս հրաւիրում...

Առիւծը ժողովեց իրան, յետոյ ոստնեց:

— Մեռնել ազատ... գոչեց նա. և երկաթը վժժալով նրա կուրծքը մղեց:

Առիւծը գալարուեց, երկնքին նայեց, անապատը երազեց, անտառին հառաչեց և հրաշէկ երկաթը կրծքին, աչքերն ազատուեցան, մեռաւ քաջի պէս, բայց, ազատ օդում, ազատ երկնքի տակ...